



73. ՄԸԶՆԵ ՈՐ ՄԵԿՆ Է ԽԵԼՈՔ

Մարդ մե ջաղաշ կէրթեր, ճամպին էշ կը տլվի, մինակ չը կոնա տլին հանն: Ճամպորդ մը գիկա գընցնա, իշու տեր կըսե:

— Ախպե՛ր, խնդիրք կէնիմ քըզնե, արի օգնե ընձի զէշն ու գուր բեռ տլին հանինք:

Մարդ գիկա, զէշն ու բեռ տլին կը հանին, մարդ կը տեսնա, օր բեռան մեկ աչք ցորեն է, մեկել՝ քար:

— Զա՛նըմ,— կըսե օգնող,— քար ինչի՞ իս լցի մըջ բեռան, խո քար լե չը տանի՞ս աղաս:

— Չէ՛,— կըսե իշու տեր,— ցորեն քիչ էր, մեկ աչք ցորեն լցի, մեկել՝ քար, օր համդար գան:

— Շատ աղեկ,— կըսե,— ցորեն քիչ էր, մեկ աչք լցելու տեղ, կը կիսեր, կես՝ մեկ աչք կը լցեր, մեկէլ կես լե՛ մեկել աչք, դհա թեթև կէդնե, էշ լե չը տլվեր:

Օգնող մարդ գքարեր կը թափե, ցորնի կես կը թողե մեկ աչք, մեկէլ կես՝ մեկել աչք, գթեռան բերան կը կարե, ինք մինակ կը վերցու թալե վըր իշուն, զմարդ ճամպու կը դնե:

Իշու տեր քիչ մե կէրթա, կը դառնա բոռա:

— Ա՛խպեր, ա՛խպեր, կանի, քըզնե բան մե հարցում:

— Ի՞նչ կը հարցուս:

— Ես օր անխելք իմ՝ շատ հարուստ իմ. դու օր հմլա խելքով իս՝ մկա ի՞նչ խըդար մալ ու դուվըթի տեր պտի էղնիս:

Մարդ կըսե:

— Ա'խպեր, ես մալ ու դովաթ շունիմ, անջախ օր ապրուստ կէնիմ:

— Օղորդմա՛:

— Օղորդմա:

— Դե, դառձի արի, իմալ օր գիմ իշու բեռ դարտրկեցիր՝ զբարեր էլման լցե մեկ աչք, զցորեն՝ մեկ աչք, բառձի վըր իշուն, թող ու գնա: Ես՝ անխելք, ֆախաթ ունևոր ու զանգին, դու խելքով՝ լե անջախ ապրուստ կէնիս, մըզնե ո՞ր մեկն է խելոք:

